

5596

Հայկական ԽՍՀ — Армянская ССР

Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎ. ԼԵՆԻՆԻ ՇքԱՆՉԱՆԱԿԻՐ ՈՊԵՐԱՅԻ ՅԵՎ ԲԱԼԵՏԻ ՊԵՏՐԱԶՐՈՒ
Գույնական թատրոն օպերա և բալետ անդամակցություն

782

ԿԸ

0-57

ԱԼՄԱՍ

Ապերա չորս գործողությամբ

ՅԵՐԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ Ա. Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ

ԼԻԲՐԵՏՈ Ս. ՊԱՐՆՈԿԻ ՅԵՎ ՇՔԱՆՉԱՆԱԿԻՐ Տ. ՀԱԽՈՒՄՅԱՆԻ
ԸՆՍ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
„ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ“ ՊՈԵՄԻ

782
0-57

ՅԵՐԵՎԱՆ

1940

ԵՐԵՎԱՆ

02.09.2013

5596

25 OCT 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԴՎԱՅՈՒԹՅԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԴՎԱՅՈՒԹՅԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԴՎԱՅՈՒԹՅԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԴՎԱՅՈՒԹՅԱՆԻ

1673
40



Ս. Ս. Սպենդիարյան

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Թարուլ, իայ իշխան
Ալմաստ, իշխանուհի, Թարուլի կինը
Ռուբեն, Թարուլի զինակիցը
Գայանե, իշխանուհու նաժիշտը
Նադիր շահ
Շեյխ
Աշուղ
Գուշակող կին
Մաղրածու
Զորավարներ, քիկթապահներ, պարագներ, յերգչներ:



Ա Լ Մ Ա Ս

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Նադիր-Շահի բանակատեղին

Արդեն քառասուն որ ե, ինչ իրանական զորքերն ապար-
դյուն կերպով պաշարել են հայկական թմրաբերդ ամբոցը:
Նրանց բոլոր զբոճները հետ են մղվել: Բերդի պաշտպանները,
վորոնց ղեկավարում և խելոք ու քաջարի թաթուլ էշխանը,
կովում են առյուծի պիս:

Սուրհանգակները Նադիր-շահին լուր են բերում, վոր թըմ-
կաբերդ ամբոցի վրա կատարված վերջին հարձակման ժամա-
նակ իրանական զորքերը ծանր պարտություն են կրել: Նադիր-
շահը հրամայում և անհաղող վճռական հարձակում ոկտել
սպառնում և անողոք պատժի յենթարկել պաշտպաններին:
Քայլերդի հնչյունների առկա մարտի դաշտ և մեկնում Նադիր-
շահի զորքերի մի նոր ջոկատ:

Նադիր-շահը տեղեկություններ և ստանում, վոր անփառու-
նակ պատերազմի հարուցած դժոնությունն իր զորքի մեջ
աճում եւ: Իմաստուն ծեր շեյխին գիմելով՝ նա խորհուրդ և
հարցնում, թե ինչպես անի, վոր թշնամուն կարողանա հաղթել:

Շեյխը խորհուրդ և տալիս գայթակղեցնելու նպատակով
մի աշուղ ուղարկել թաթուլի կնոջ՝ գեղեցկուհի Ալմաստի մոտ:
Եեթե հաջողվի հարատություն, փառք, գան խոստանալով՝ նրան
շլացնել, նա իր ամուսնուն կղավահանի և բերդի զոները բաց
կանի Նադիր-շահի զորքերի առաջ:

Նադիր-շահը հրանգ և տալիս աշուղին՝ ինչ գնով ել լինի,
իր կողմը գրավել փառամոլ Ալմաստ իշխանուհուն:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԹԱԼԿԱՔԵՐԴ ամրոցը, ԹԱՔՈՎԻ պալատը

Կանայք գորդ են գործում: Նրանք յերգում են իրենց հայրենիքին բաժին ընկած ծանր փորձությունների մասին: Իր մտերիմ Գայանեյի ուղեկցությամբ՝ զալիս և Ալմաստը, Նա դեռևս իր տեսած յերազի ազգեցության տակ ե. Նա հուղված է: Գայանեյին հայտնի յե Ալմաստի հուղմունքի պատճառը, Նա լսել և Ալմաստի զառանցանքը դահի, հայրենիքին դավաճանելու մասին:

Գուշակ պառավը լավ բան չի գուշակում Ալմաստին: Խռովությունն աճում և Ալմաստի սրտում:

Հայտնվում ե Նադիր-շահի ուղարկած աշուղը, Ալմաստն ուղում և նրան վանդել, բայց աշուղը համառ ե. Նա անվրդով լարում ե իր քյամանչան ու սկսում ե իր յերգը: Նա զովերգում և Ալմաստի գեղեցկությունը և արքայական թագ և խոստանում նրան: Իշխանության տեսչը նոր ուժով և վառվում Ալմաստի մեջ:

Սակայն նա հիշում ե իր սիրելի ամուսնուն՝ Թաթուլին, նրա քաջությունը, նրա անսահման նվիրվածությունը իր ժողովրդին և հոգեպես տանջվում ե: Ալմաստն աղաչում ե Գայանեյին, վոր նա աշուղին դուրս վնադի: Գայանեն պատասխանում է նրան:

Քշել դժվար չե, կը գնա,
Կապրի սակայն հոգուդ խորքումը՝
Չե վոր յերգում նրա խոսում ե
Խղճի կարոտը լուս:

Կամաց-կամաց հավաքվում ե Թաթուլի նոր հաղթությամբ վոկեվորված ժողովուրդը:

Ժողովուրդը հրճանքով և գիմավորում իր սիրելի հերոս Թաթուլին և նրա զինակիցներին:

ՅԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Դահիին Թաքուլի պալատում

Թշնամուն հաղթելու առթիվ կազմակերպված ե ճոխ խընճույք: Թաթուլի մտերիմ բարեկամ ու զինակից Ռուբենը հիացմունքով դրվատում ե նրա հերոսությունը:

Ալմաստը, գինով լի գավաթը Թաթուլին մատուցելով, հարցնում ե նրան՝ արդյո՞ք բերդի դաների մոտ պահակ կարգված ե, թև զոչ: Իմանալով, վոր զինուակալները քաջարի Արտավագրի և Յերվանդի ջոկատներն են, Ալմաստը կարգադրում ե նրանց և գինի տանել:

Խնդությունն աճում ե, Աղջիկների պարին հաջորդում ե տղամարդկանց պարը:

Գալիս ե ծաղրածուն: Թաթուլը նրան առաջարկում ե ցույց տալ, թե Նադիրշահը ինչպես և զրոնում բերդի վրա: Բնդիանուր ծիծաղի տակ ծաղբածուն պատկերացնում ե շահին իրեւ մի փքված աքաղաղ:

Ալմաստի հուղմունքը չի վրիպում Թաթուլի ուշադրությունից: Անհանգստացած Թաթուլը հարցնում ե, թե նրան ինչ ե պատահել: Ալմաստը վորոշակի պատասխան տալ չի կարողանում: Նա զինի յե ուղում: Յերկու հակադիր ձգտումների պայքարը նրա հոգու մեջ ծայրահեղ աստիճանի յե համար: Նա առում ե ինքն իրեն՝

Ցնդում եմ... տեր... չե վոր նրան սիրում եմ...

Բայց նա կանգնել ե իմ փառքիս ճամբին:

Թաթուլն իրեն յերջանիկ ե զգում իր բարեկամ զինակիցների շրջանում: Նա դիմում ե Ալմաստին՝

Արդար խոսքին որտով խոնարհ եմ,

Հոգով պիտի մնամ արդար,—

Լոկ պաշտպանում եմ հողն ու քարը

Իմ հայրենյաց: Յեկ հողն ոտարը

Մրտիս մնում ե միշտ ոտար:

Մատուցողներն անընդհատ կերակուր և գինի յեն բերում:
Ալմաստն սկսում ե պարել: Նրա պարի վերջում գալիս ե
Նադիր-շահի ուղարկած աշուղը և քնարեր գեղ պարունակող մի
սափոր ե հանձնում Ալմաստին: Ալմաստն առնում ե սափորը
և գինի յել լցնում թաթուլի ու նրա զինվորների զավաթները:
Հարբած հյուրերը անզգայացած քնում են:

Ալմաստը վառված ջահը ձեռքին՝ անազմուկ անցնում ե
զինվորների միջով: Գայանեն փորձ ե առնում նրան կանգնեց-
նելու, բայց Ալմաստը վազելով համում ե մուտքի դռանը և
Նադիր-շահի զորքերին ազդանշան ե տալիս:

Գայանեն հուսահատ կանչում ե՝

Արթնացեք, ո արթնացեք շուտով...

Դավաճանություն:

Կոիվ ե սկսում պալատ խուժած թշնամու և բերդի պաշտ-
պանների միջեւ: Թաթուլն ու իր զինակիցները հերոսարար դի-
մադրում են թշնամուն:

Նադիր-շահի զինվորներից մեկը թիկունքից մոտենում ե
Թաթուլին և դաշույնի մի հարվածով սպանում ե նրան: Հայ
մարտիկները կովելով նահանջում են:

Թայլերգի հնչյունների տակ՝ թաթուլի պալատն ե մտնում
Նադիր-շահը: Ալմաստը խոնարհ վողջույնով դիմավորում ե նրան:

ԶՈՐՅՈՒԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Հրապարակ բերդի մեջ, պալատի առաջ

Նադիր-շահը հրամայում ե կանչել գերյալ Ալմաստին: Շահը
հայտարարում ե Ալմաստին, վոր նա այսուհետեւ իր հարելը
պետք ե լինի: Իր խարված լինելը տեսնելով, Ալմաստը բացա-
կանչում ե՝

Ո, զգուշացիր, Նադիր,

Ցեզ թող այդ խաղը:

Այսուեղ յեկել եմ մութ հոգով,

Կորած, և վոչ թե քեզ զրկեմ

Ու գուրգուրեմ:

Նա ասում ե, վոր շահը նրան յերբեք իր հարեմում չի տեսնի:

Նադիր-շահի նշանացի հրամանով Ալմաստին պալատ են
տանում:

Հեռվից լսում ե ամբոխի աղմուկը: Ներս ե վազում մի
սուրհանդակ և հաղորդում ե, վոր բերդում ժողովուրդն ապօ-
տամբել ե և Ռուբենի գլխավորությամբ շարժվում ե պալատի
վրա: Նադիր-շահն շտապ նահանջում ե:

Գալիս ե Ռուբենը իր մարտիկներով: Հրապարակը լցվում
ե ապստամբած ժողովրդով:

Մի կրակոտ ճառով Ռուբենը փառաբանում ե դավաճանու-
թյան գոհ գնացած հերոսի հիշատակը:

Լուռ վշտով համակված՝ բոլորը խոնարհում են իրենց
գլուխները:

Գալիս ե Ալմաստը: Դավաճանին ներում չկա: Ժողովուրդը
միաբերան նրան մահվան ե դատապարտում:

Ռուբենը հիշեցնում ե, վոր թշնամին գեռ ջախջախված չե:

Հայ ժողովրդի բուռն հրձվանքն իրենց ուղեկից ունենա-
լով՝ նրա քաջարի զավակները կովի յեն նետվում հանուն հայ-
բենիքի, հանուն ազատության:

ՀՀ Ազգային գրադարան



NL0304501

ԴԻՆԸ 50 ԿԱՊ.

4298